ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1302-01.04.2026-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է ««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկվում է պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը:»: Հետևաբար առաջարկվում է **«դեկտեմբերի 17-ի»** բառերը փոխարինել «**դեկտեմբերի 4-ի**» բառերով:	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը	**Ընդունվել է:**
2.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) ամբողջ տեքստից հանել «կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության» բառերը: Հարկ ենք համարում նշել, որ Օրենքում նշված բառերը հիշատակվում են 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, 5-րդ հոդվածում, որոնք շարադրվում են նոր խմբագրությամբ, 14-րդ հոդվածի 1-ին մասում, որտեղ կատարվող փոփոխությամբ քննարկվող բառերը փոխարինվում են: Ըստ այդմ Օրենքում «կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության» բառերը	**Չի ընդունվել:** Առավել նպատակահարմար է Նախագծում թողնել Նախագծի 1-ին հոդվածով ներկայացված ձևակերպումը՝ հաշվի առնելով, որ Նախագծում իրականացված փոփոխությունների արդյունքում նոր խմբագրությամբ շարադրված կարգավորումներից բացի «կամ քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրության» բառերը հիշատակվում են նաև Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում: Բացի դրանից, Նախագծով	**Չի ընդունվել:**

			հիշատակված են մնում միայն 14-րդ հոդվածի 2-րդ մասում: Ուստի առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխության փոխարեն համապատասխան փոփոխություն կատարել հղում անելով միայն Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը, այն է. «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի	նախատեսված ձևակերպմամբ հստակ տեսանելի է, թե ինչ կարգավորում է դուրս գալիս օրենքի ամբողջ տեքստից:	
3.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետով «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նոր խմբագրությամբ շարադրվող 11-րդ կետի համարը տեքստից առաջարկվում է բաժանել փակագծով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված դրույթը, այն է. «Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:»:	**Ընդունվել է:** Նախագծից հանվել է 2-րդ հոդվածի 4-րդ կետը	**Ընդունվել է:**
4.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետեր, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 11-րդ հոդվածներ	Առաջարկվում է ««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից հանել 2-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերը, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 11-րդ հոդվածները՝ դրանց հետագայում համակարգային փոփոխությունների համատեքստում քննարկելու և անդրադառնալու նպատակով:	**Ընդունվել է:** Նախագծից հանվել է 2-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերը, 5-րդ, 7-րդ, 8-րդ և 11-րդ հոդվածները:	**Ընդունվել է:**
5.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդված	1) նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 5-րդ հոդվածի համաձայն նախատեսվում է Օրենքի կարգավորումներից հանել վերապատրաստման նպատակով տրամադրվող պետական աջակցությանն առնչվող կարգավորումները: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում կրթական բաղադրիչի ներառմանն ուղղված միջոցառումների խթանման համատեքստում **առաջարկվում է վերապաստրաստման մասով Օրենքում փոփոխություններ չկատարել:**	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է:	**Ընդունվել է:**

6.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 2-րդ մաս	2) նոր խմբագրությամբ շարադրված 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. *Բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ նաև՝ տնտեսավարող սուբյեկտ), <u>աշխատանքային միգրանտներին</u> կամ <u>այլ սուբյեկտներին</u> պետական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով:*» Այսինքն, 2-րդ մասը լրացվում է «**աշխատանքային միգրանտներին**» արտահայտությամբ: Հաշվի առնելով, որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ պետական աջակցություն է համարվում բարձր տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություն-ներին կամ անհատ ձեռնարկատերերին կամ այլ սուբյեկտներին ՀՀ պետական բյուջեից նույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն տրամադրվող գումարը՝ առաջարկվում է վերոնշյալ մասից հանել ***«, աշխատանքային միգրանտներին»*** բառերը հանել:	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է :	**Ընդունվել է:**
7.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 5-րդ մաս	3) նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է, որ նույն մասին համապատասխան աշխատանքային միգրանտին տրամադրվող պետական աջակցության գումարների մասով գործատու հանդիսացող տնտեսավարող սուբյեկտի, ինչպես նաև վարձու աշխատող աշխատանքային միգրանտի համար **հարկային պարտավորություն չի առաջանում**: հաշվի առնելով, որ հարկային պարտավորությունների առաջացման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքով, ուստի առաջարկվում է ***Նախագծի 3-րդ հոդվածով փոփոխվող Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի 2-րդ նախադասությունը*** փոխարինել ՀՀ հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի վերջին նախադասության	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է՝ Մասնավորապես 5-րդ մասի 2-րդ ենթակետը ձևակերպվել է հետևյալ կերպ. ***«2) տնտեսավարող սուբյեկտը պետական աջակցության գումարը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է աշխատանքային միգրանտին, որպես լիազոր մարմնի կողմից աշխատանքային միգրանտի***	**Ընդունվել է:**

			ձևակերպմամբ,	***համար (օգտին) կատարվող վճարում:»***	
8.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 5-րդ մաս	3.1) նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Կառավարության կողմից պետական աջակցություն տրվում է աշխատանքային միգրանտին և այդ գումարի նկատմամբ պետք է տարածվի վերջինիս սեփականության իրավունքը: Նույն մասի 2-րդ կետի համաձայն տնտեսվարող սուբյեկտը, ստանալով աշխատանքային միգրանտին տրամադրվող աջակցության գումարը, պարտավորվում է այն փոխանցել աշխատանքային միգրանտին հինգ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն այդ պարտականության կատարումն ապահովելու նպատակով որևէ պետական հարկադրանքի ձև նախատեսված չէ, ինչն աշխատանքային միգրանտի իրավունքի պաշտպանությունը դարձնում է «թերի երաշխավորված»՝ մասնավոր սուբյեկտի հետ՝ գումարի վերադարձի խնդիր ունենալու դեպքում նրան ուղղորդելով քաղաքացիաիրավական ճանապարհով վեճը լուծել: Ուստի առաջարկվում է օրենսդրական մակարդակով տնտեսվարող սուբյեկտի համար պարտականություն նախատեսելու հետ մեկտեղ երաշխավորել դրա կատարումը որոշակի բացասական հետևանքների սպառնալիքով, ինչն էլ իր հերթին կպաշտպանի աշխատանքային միգրանտի սեփականության իրավունքը:	**Չի ընդունվել:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է: Գումարը միգրանտին չփոխանցելու համար տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ օրենսդրությամբ պետական հարկադրանք չի նախատեսվում՝ այս փուլում ոչ նպատակահարմար լինելու հանգամանքով պայմանավորված: Հնարավոր զսպող մեխանիզմը կսահմանվի աջակցության տրամադրման պայմանագրով:	**Չի ընդունվել:**
9.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածով սահմանված պետական աջակցության տրամադրման դեպքում տվյալ նոր աշխատողի կամ աշխատանքային միգրանտի համար հաշվարկված եկամտային հարկի հաշվարկման, փոփոխության ինչպես նաև աշխատանքային միգրանտին պետական աջակցության գումարները չփոխանցելու	**Չի ընդունվել:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է: Հնարավոր զսպող մեխանիզմը կսահմանվի աջակցության տրամադրման պայմանագրով:	**Չի ընդունվել:**

			ռիսկը կրում է տնտեսավարող սուբյեկտը:»: Գտնում ենք, որ սույն կարգավորումը բավական անորոշ կերպով է պաշտպանում աշխատանքային միգրանտի սեփականության իրավունքը, քանզի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված՝ սեփականության և իր գույքից անարգել օգտվելու իրավունքի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս Trgo v. Croatia, Application no. 35298/04, 11.06.2009, Final 11.09.2009, կետ 44):		
10.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդված	4) նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ պետական աջակցությունը տրամադրվում է տվյալ աշխատողի համար **հաշվարկված և հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի** գումարի նկատմամբ 60 տոկոսի հաշվարկմամբ: Այսինքն, առաջարկվում է փոխել պետական աջակցության գումարի հաշվարկման բազան՝ սահմանելով, որ պետական աջակցության գումարի չափը հաշվարկվում է վարձու աշխատողի **բոլոր եկամուտների մասով** հաշ-վարկված եկամտային հարկի գումարի նկատմամբ: Առաջարկվում է թողնել գործող կարգավորումը՝ հաշվարկը կատարվել հիմք ընդունելով **աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարը**: Միաժամանակ հաշվի առնելով բարձր տեխնոլոգիաների ոլորտի առաջնահերթությունները և ՀՀ–ում գիտահետազոտական և փորձարարական մշակումների (R&D) աշխատանքների	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է՝ Մասնավորապես ներառվել են 6-րդ և 8-րդ մասերում:	**Ընդունվել է:**

			զարգացումը՝ առաջարկվում է ***«Օրենքով սահմանված պետական աջակցության տրամադրման ժամանակ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 1⁄1-ին մասով հարկային արտոնությունից օգտվող վարձու աշխատողների մասով աջակցության չափի հաշվարկման հիմքում աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված եկամտային հարկի գումարի փոխարեն կիրառվում է նույն ժամանակաշրջանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 20 տոկոսին համարժեք մեծությունը:»***: Միաժամանակ, տարընկալումից խուսափելու նպատակով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ մասը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. «6. Սույն հոդվածով սահմանված պետական աջակցության տրամադրման համար հիմք հանդիսացող աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկման, փոփոխության, ինչպես նաև աշխատանքային միգրանտին պետական աջակցության գումարները չփոխանցելու ռիսկը կրում է տնտեսավարող սուբյեկտը:»:		
11.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 7-րդ մաս	5) նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «7. *Պետական աջակցություն ստացած նոր աշխատողի կամ աշխատանքային միգրանտի համար հաշվարկված եկամտային հարկի չափի փոփոխման դեպքում ավել վճարված գումարը տնտեսավարող սուբյեկտի կողմից ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,* ***բացառությամբ այն դեպքի****, երբ աշխատանքային միգրանտին ավել վճարված պետական աջակցության գումարի հաշվարկման հիմքում ի հայտ եկած հանգամանքը պայմանավորված է Լիազոր մարմնի կողմից պետական աջակցության գումարի չափի սխալ հաշվարկմամբ:»:*	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է:	**Ընդունվել է:**

			Միաժամանակ, նախագծի ընդունման հիմնավորման 1-ին կետում վերոնշյալ դրույթի անհրաժեշտությանն անդրադարձ չկա: Միայն նշվել է, որ օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների վերացման և հստակեցման նպատակով բարելավվում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում պետական աջակցության տրամադրման գործիքակազմը: Այս առումով, հայտնում ենք, որ պարզ չէ, թե ինչ վերլուծությունների կամ դիտարկումների հիման վրա է առաջարկվել սահմանել դրույթ, համաձայն որի Լիազոր մարմնի կողմից պետական աջակցության գումարի չափի սխալ հաշվարկման դեպքում աշխատանքային միգրանտին վճարված գումարները վերադարձման ենթակա չեն: Հաշվի առնելով վերոգրյալը՝ **առաջարկվում է վերոնշյալ 7-րդ մասով նախատեսված կարգավորումն ամբողջությամբ հանել Նախագծից**՝ հաշվի առնելով հանրային միջոց-ների անարդյունավետ ծախսերի բացառման սկզբունքը: **Հետևաբար, անհրաժեշտ կլինի հանել նաև 8-րդ մասը ևս**:		
12.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 10-րդ մաս	6) նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանվում է, որ նույն հոդվածի 4-րդ մասով (նոր աշխատողի մասով) սահմանված աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում և շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Ընդ որում, շրջանառության հարկի համակարգում գործող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերն աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող է շարունակել օգտվել աջակցությունից, եթե գործում է հարկման ընդհանուր համակարգում: Նշվածի հետ կապված առաջարկվում է համարժեք կարգավորումներ	**Ընդունվել է:** Նախագծի 3-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 5-րդ հոդվածը վերաշարադրվել է:	**Ընդունվել է:**

			նախատեսել նաև նույն հոդվածի 5-րդ մասով (միգրանտի համար) սահմանված աջակցության համար: Ելնելով նշվածից առաջարկվում է 10-րդ մասում **«4-րդ մասում» բառերը փոխարինել «4րդ և 5-րդ մասերում»: Այնուհետև հիշյալ կարգավորումը վերաբերելի կլինի նաև վերապատրաստման դեպքում պետական աջակցության տրամադրման կարգավորումներին**:		
13.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել վերջին նախադասությունը՝ դրանց ևս հետագայում անդրադառնալու նպատակով: Նույն հոդվածի 5-րդ մասում առաջարկվում է «ստացողի,» բառից հետո լրացնել «իսկ աշխատանքային միգրանտի դեպքում՝ միջնորդի,» բառերը՝ հաշվի առնելով, որ պայմանագիրը կնքվելու է ոչ թե աշխատանքային միգրանտների հետ այլ միջնորդ տնտեսավարող սուբյեկտի հետ՝ կարգավորելով նաև միջնորդի և լիազոր մարմնի հարաբերությունները:	**Ընդունվել է:** Նախագծի 4-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխությունը, որով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 6-րդ հոդվածը վերաշարադրվել է:	**Ընդունվել է:**
14.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Պետական աջակցության համար կարող են դիմել հետևյալ սուբյեկտները. 1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունները, այդ թվում՝ դուստր ընկերությունները, իրավաբանական անձանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները»: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ներկայացուցչությունները և մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն ու գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա: Չհանդիսանալով իրավաբանական անձ՝ վերջիններս վարչական իրավահարաբերություններին չեն մասնակցում	**Չի ընդունվել:** ՀՀ կառավարությունը նախատեսում է մասնաճյուղերին և ներկայացուցչություններին ևս տրամադրել պետական աջակցություն:	**Չի ընդունվել:**

			ինքնուրույն, ինչը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներից և պետք է գործեն հիմնական իրավաբանական անձի՝ տվյալ դեպքում առևտրային կազմակերպության անունից: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «իրավաբանական անձանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները» բառերը		
15.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «5. Պետական աջակցության տրամադրման բավարարման դեպքում աջակցությունը ստացողի և լիազոր մարմնի միջև կնքվում է պայմանագիր, իսկ մերժման դեպքում հարթակով դիմողին է ներկայացվում պետական աջակցության տրամադրման մերժման մասին վարչական ակտը՝ լիազոր մարմնի գրության տեսքով:»: Սույն դրույթից բխում է, որ պետական աջակցության տրամադրման մերժման դեպքում դիմողին ներկայացվում է վարչական ակտ, մինչդեռ բավարարման դեպքում նախատեսվում է պայմանագրի կնքում: Հարկ է նկատել, որ պայմանագրի կնքումը բնորոշ է առավելապես քաղաքացիաիրավական հարաբերություններին և անհասկանալի է, թե քննարկվող հարաբերությունների շրջանակում ինչ կարգավիճակ է ունենալու այդ պայմանագիրը և ինչ հարաբերություններ է կարգավորելու: Հաշվի առնելով, որ տվյալ հարաբերությունները ծագում են պետական լիազորությունների իրականացման արդյունքում, ունեն վարչաիրավական բնույթ, հիմնավոր է, որ պետական աջակցության ինչպես մերժումը, այնպես էլ տրամադրումը ձևակերպվեն վարչական ակտերով:	**Չի ընդունվել:** Պետական աջակցության տրամադրման բավարարման դեպքում պայմանագրի կնքման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեի ծրագրային տողերում պետական աջակցության համար նախատեսված գումարը ներառված է «դրամաշնորհներ» տողում, որով պայմանավորված փոխանցումներն իրականացվում են պայմանագրի հիման վրա: Բացի այդ, պայմանագրով կսահմանվեն գումարը միգրանտին փոխանցելու հետ կապված կարգավորումներ:	**Չի ընդունվել:**
16.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և	Առաջարկվում է Նախագծից հանել 6-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը՝ դադարեցման հիմքերին համակարգային փոփոխությունների ժամանակ	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը, առաջարկի	**Ընդունվել է:**

		լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	անդրադառնալու հիմնավորմամբ, իսկ մյուս կետերն արդեն իսկ կարգավորված են Օրենքում:	ընդունման արդյունքում հոդվածի համարը փոխվել է և մնացած կարգավորումները նախատեսվել են 5-րդ հոդվածով	
17.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծից հանել 10-րդ հոդվածի 2-րդ կետը՝ մոնիթորինգի անցկացման հարաբերությունները հետագայում կարգավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը, առաջարկի ընդունման արդյունքում հոդվածի համարը փոխվել է և մնացած կարգավորումը նախատեսվել է 7-րդ հոդվածով	**Ընդունվել է:**
18.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված	Կառավարության առաջարկությունների ներկայացման համատեքստում անհրաժեշտ է Նախագծի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «***Հոդված 12.*** ***1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից սկսվող հաշվետու ժամանակաշրջանների վրա:*** ***2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Տնտեսավարող սուբյեկտը կարող է դիմել պետական աջակցության համար 2025 թվականի հունվարի 1-ից հետո բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած նոր աշխատողի համար, եթե տվյալ նոր աշխատողի նախկին գործատու տնտեսավարող սուբյեկտը իր մասով չի ստացել պետական աջակցություն:*** ***3. Ենթաօրենսդրական ակտերում սույն օրենքից բխող փոփոխությունները կատարվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:»:***	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխությունը, առաջարկի ընդունման արդյունքում հոդվածի համարը փոխվել է և անցումային և եզրափակիչ դրույթները նախատեսվել են 8-րդ հոդվածով	**Ընդունվել է:**
19.	ՀՀ կառավարություն	««Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	Նախագծի մի շարք հոդվածներում միևնույն միտքն արտահայտվում է տարբեր կերպ, մասնավորապես. Նախագծում «լիազոր մարմին», «տնտեսվարող սուբյեկտ» եզրույթները	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխությունները	**Ընդունվել է:**

		մասին» օրենքի ամբողջ տեքստում	կիրառվում են և՛ մեծատառով, և՛ փոքրատառով: Նախագծում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են «պետական աջակցություն» և «աջակցություն» եզրույթները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն. «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: 2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկվում է Նախագծում միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ, ինչպես նաև հաշվի առնել Օրենքում արդեն իսկ սահմանված հասկացությունները:		
20.	ՀՀ կառավարություն	««Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է փաթեթից հանել ««Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագիծը:	**Չի ընդունվել :** Նախագծերի փաթեթից չի հանվել ««Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի նախագիծը	**Չի ընդունվել :**